



**YEREVAN STATE UNIVERSITY
ENGLISH PHILOLOGY CHAIR**

ARMENIAN ASSOCIATION FOR THE STUDY OF ENGLISH

**LANGUAGE AND LITERATURE IN
THE CONTEMPORARY PARADIGM
OF SCIENTIFIC KNOWLEDGE**

SCIENTIFIC JOURNAL

9

Yerevan
“Lusakn”
2018

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԱՆԳԼԻԱԿԱՆ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

ԱՆԳԼԵՐԵՆԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ

ԼԵԶՈՒՆ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ԳԻՏԱԿԱՆ ԻՄԱՑՈՒԹՅԱՆ
ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՐԱՑՈՒՅՑՈՒՄ

ԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

9

Երևան
«Լուսակն»
2018

Հանդեսը հրատարակվում է ԵՊՀ գիտական խորհրդի որոշմամբ
The Journal is published by the decision of YSU Scientific Council

Գլխավոր խմբագիր՝ Ս. Գասպարյան, բ.գ.դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ քրթակից անդամ,
ՀՀ Գիտության վաստակավոր գործիչ

Խմբագրական խորհուրդ՝

Ս. Տեր-Մինասովա, բ.գ.դ., պրոֆ.

Ա. Զորջի, բ.գ.դ., պրոֆ.

Ս. Հարությունյան, բ.գ.դ., պրոֆ.

Լ. Մաթևոսյան, բ.գ.դ., պրոֆ.

Ն. Հարությունյան, բ.գ.դ., պրոֆ.

Շ. Պարոնյան, բ.գ.դ., պրոֆ.

Գ. Մուրադյան, բ.գ.դ., դոց.

Գ. Հարությունյան, բ.գ.թ., դոց.

Լ. Կարապետյան, դոց. (պատասխ. քարտուղար)

Գ. Մադոյան, բ.գ.թ.

Editor-in –chief: S. Gasparyan, Doctor of Sciences (Philology), Prof., Corresponding
Member of RA NAS, Honoured Scientist of RA

Editorial Board:

S. Ter-Minasova, Doctor of Sciences (Philology), Prof.

A. Giorgi, Doctor of Philology, Prof.

S. Haroutyunian, Doctor of Philology, Prof.

L. Matevosyan, Doctor of Sciences (Philology), Prof.

Sh. Paronyan, Doctor of Sciences (Philology), Prof.

N. Haroutyunyan, Doctor of Sciences (Philology), Prof.

G. Muradyan, Doctor of Sciences (Philology), Associate Prof.

G. Haroutyunyan, Doctor of Philology, Associate Prof..

L. Karapetyan, Associate Prof. (executive Secretary)

G. Madoyan, Doctor of Philology

Լեզուն եվ գրականությունը գիտական իմացության ժամանակակից հարացույցում:
Գիտ. հանդես. – Եր.: Լուսակն, 2018. - 212 էջ. *Հանդեսը ընդգրկում է բանասիրական գիտելիքի հինգ հիմնական բնագավառ՝ լեզվաբանություն, լեզու. և մշակույթ, թարգմանաբանություն, գրականագիտություն, նաև դասավանդման մեթոդիկա:*

Language and Literature in the Contemporary Paradigm of Scientific Knowledge.
Scientific Journal. – Yerevan: Lusakn, 2018. - 212 p. *The Journal covers five basic spheres of philological knowledge: Linguistics, Language and Culture, Translation Studies, Literature Studies, as well as Language Methodology.*

© Ս. Գասպարյան, 2018 թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՏԱՐԱԾԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՓՈԽԱԲԵՐԱԿԱՆ ԻՄԱՍՏԸ ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ.....	8
<i>Նաիրա Մկրյան</i>	
ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՍՏԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՐԱՑՈՒՅՑՈՒՄ	15
<i>Աննա Կնյազյան</i>	
ԳԻՏԱՖԱՆԱՍՏԻԿԱՅԻ ՍԱՐԴԱԲԱՆԱԿԱՆ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	25
<i>Գայանե Մուրադյան</i>	
ԲՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ԲԺՇԿԱԳԻՏԱԿԱՆ ՓՈԽԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ՄԿԶԲԱՂԱԲՑՈՒՐ.....	32
<i>Ալինա Պետրոսյան</i>	
ԼԱՏԻՆԵՐԵՆ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՄԱՆ ՅՈՒՐԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԼԵԶՎՈՒՄ	40
<i>Արմենուհի Մարտիրոսյան, Մարինե Մկրտչյան</i>	
ԳՈՎԱԶԴԻ՝ ՈՐՊԵՍ ՀՈԳԵԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ԷԹՆՈՄՇՆԱԿՈՒԹՅԱՅԻՆ ԵՐԵՎՈՒՅԹԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	47
<i>Ռուզաննա Առաքելյան, Գոհար Հարությունյան</i>	
ԵԶՐՈՒՅԹԻ ԵՎ ԲԱՌԻ ԳԻՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՈՒՄՆ ՈՒ ԴԻԱՑ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	54
<i>Հասմիկ Ղաթոյան</i>	
Մ. ԱԲԵՂՅԱՆԻ ՀԻՆԳ ՀՈՒՈՎԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ՝ ՀԱՅԵՐԵՆԻ ՀՈՒՈՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՃՇԳՐԻՑ ԼԵՐԿԱՅԱՑՆՈՂ ԵՂԱՆԱԿ	63
<i>Աստղիկ Մխիթարյան</i>	
ԽՈՍՔԱՅԻՆ ԼԵՐԳՈՐԾՈՒՄԸ ԱՆԳԼԵՐԵՆ ԱՌՑԱՆՑ ԳՈՎԱԶՂԱՅԻՆ ՄԵԴԻԱՏԵՔՍՏԵՐՈՒՄ.....	69
<i>Համլետ Առաքելյան</i>	
ՆԱԽԱԾԱՆՑՆԵՐԻ ՁԵՎԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ԻՄԱՍՏԱՅԻՆ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ ԺԱՍՏԱՆԱԿԱԿԻՑ ԻՏԱԼԵՐԵՆՈՒՄ, ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ ԵՎ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ	76
<i>Մարիամ Գևորգյան</i>	
ԳՈՑԱԿԱՆԱԿԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐՈՎ ՀԱՄԱԴՐԱԿԱՆ ԲԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ ԵՎ ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ.....	88
<i>Միրարփի Կարապետյան</i>	
ԴԱՏԱԻՐԱՎԱԿԱՆ ՏԵՔՍՏԵՐԻ ԼԵԶՎԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	97
<i>Նարե Զորանյան</i>	

ՖԵՆՈՐՁԻ ՈՃԱԺԱՆՐԱՅԻՆ ԴՐՄԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԹՈՒՔԻՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ	103
<i>Անի Տեր-Պետրոսյան</i>	

THE FUNCTIONAL INTERPRETATION OF OK? IN ACADEMIC DISCOURSE	111
<i>Nare Hakobyan</i>	

ЯЗЫКОВАЯ САМОИДЕНТИФИКАЦИЯ ГОВОРЯЩЕГО	123
<i>Марика Тонян</i>	

ԼԵԶՈՒ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ

ՇՈՏԼԱՆԴԱԿԱՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐԶ	132
<i>Մարիանա Սարգսյան</i>	

ՄՇԱԿՈՒՅԹԸ ՈՐՊԵՍ ԼԵԶՈՒ	146
<i>Հասմիկ Մկրտչյան</i>	

COMPARATIVE ANALYSIS OF THE PROVERBS WITH THE CONCEPT WOMAN IN ENGLISH AND ARMENIAN	153
<i>Jemma Militonyan</i>	

ԹԱՐԳՄԱՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՅՆԵՐԻ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳՐԱՎՈՐ Ե ԲԱՆԱՎՈՐ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ՄԵԶ	164
<i>Նարե Զաբաղյան</i>	

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՄԵՂԱՎՈՐ-ԱՆՄԵՂ ԵՐԿԱՏՈՒՄԸ Զ. ԶՈՅՄԻ «ԵՐԻՏԱՍԱՐԴ ԱՐՎԵՍՍԱԳԵՏԻ ԴԻՄԱՆԿԱՐԸ» ՎԵՊՈՒՄ	172
<i>Արեգա Համբարձումյան</i>	

НЕКОТОРЫЕ ПСИХОЛОГИЧЕСКИЕ АСПЕКТЫ МАЛОЙ ПРОЗЫ Р.Л. СТИВЕНСОНА	179
<i>Наталья Гончар-Ханджян, Анаит Акопян</i>	

ТЕМА СМЕРТНОЙ КАЗНИ В РОМАНЕ Т.КАПОТЕ ХЛАДНОКРОВНОЕ УБИЙСТВО	188
<i>Наре Мкртчян</i>	

ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱ

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՈՍԱԶՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԵԴԻԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ	200
<i>Մարիամ Առաքելյան</i>	

ԹԱՐԳՄԱՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳՐԱՎՈՐ և ԲԱՆԱՎՈՐ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Նարե Զաքարյան

Երևանի պետական համալսարան

[...] *celui qui traduit avec la prétention de remplacer l'original, fait comme quelqu'un qui voudrait donner à un amoureux une autre femme en échange de celle qu'il aime: une femme équivalente, semblable, mais l'amoureux est amoureux de celle-ci, et non pas de ses équivalents [...]*

(Կրոչե Բ. 1991)

Գրավոր և բանավոր թարգմանությունները տարբերվում են ոչ միայն թարգմանիչների առջև դրված խնդիրներով, այլև դրանք հաղթահարելու համար պահանջվող հմտություններով և գիտելիքներով: Թարգմանելու ունակությունը մարդուն չի տրվում ի ծնե, այլ այն հմտություն է, որը կարելի է ձեռք բերել աշխատանքի և մարզվելու շնորհիվ: Սույն հոդվածում փորձ է կատարվում համակողմանի ներկայացնել գրավոր և բանավոր թարգմանությունների և թարգմանիչների աշխատանքային գործընթացների տարբերությունները:

Բանալի բառեր. *գրավոր և բանավոր թարգմանիչներ, համաժամանակյա և հետևողական թարգմանություն, անցման հմտություն, սինխրոնիզացում (համաժամանակեցում), գիտաժողովների թարգմանիչ, ուղեկցող-թարգմանիչ:*

Ներածություն

Թարգմանությունը, որպես մտավոր գործունեություն, սկիզբ է առել դեռևս վաղնջական ժամանակներից, երբ աշխարհում ի հայտ եկան տարբեր լեզուներով խոսող ժողովուրդներ: Այն միշտ էլ եական նշանակություն է ունեցել առանձին պետությունների, ինչպես նաև համաշխարհային մշակույթի պատմության մեջ:

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո թարգմանությունն իր տարատեսակներով հանդերձ շատ մեծ ուշադրության արժանացավ, քանի որ այս ժամանակաշրջանում էր, որ նոր թափ ստացան միջազգային հարաբերությունները: Սա էլ հիմք հանդիսացավ, որ այս շրջանը կոչվի «թարգմանության դարաշրջան»:

Շատերը չեն պատկերացնում բանավոր և գրավոր թարգմանիչների աշխատանքի առանձնահատկությունները: Նրանք ընկալում են միայն ակնհայտ տար-

բերությունը՝ բանավոր թարգմանիչը բառերն ուղղակի թարգմանում է բանավոր կերպով, մինչդեռ գրավոր թարգմանիչը պարզապես նույն բառերի թարգմանությունը գրի է առնում: Մակայն դրանց տարբերակումը շատ ավելի խորքային բնույթ է կրում: Չուր չէ, որ անգլերենում գոյություն ունեն տարբեր բառեր գրավոր և բանավոր թարգմանիչների համար՝ “**translator**” և “**interpreter**”:

Գրավոր և բանավոր թարգմանությունների գործընթացային տարբերությունները

Որպեսզի հասկանալի դառնան այս երկու թարգմանիչների իրականացրած գործունեության տարբերությունները, պետք է, նախ և առաջ, ուսումնասիրել նրանց աշխատանքային գործընթացների միջև տարբերությունները:

Գրավոր և բանավոր թարգմանությունների ամենակարևոր տարբերակիչներից մեկը ժամանակի կարևորությունն է: Գրավոր թարգմանության ընթացքում ժամանակը սահմանափակ չէ, և թարգմանիչն ինքն է տնօրինում իր ժամանակը: Բանավոր թարգմանչի ժամանակը սահմանափակ է և կախված է ելույթ ունեցողից:

Թե՛ գրավոր և թե՛ բանավոր թարգմանության դեպքում թարգմանչից պահանջվում է մտքերի ճիշտ ձևակերպում, ուստի թարգմանչին անհրաժեշտ է տիրապետել թե՛ աղբյուր, թե՛ թիրախ լեզուների հնչյունաբանությանը, բառապաշարին, քերականությանը և այլ առանձնահատկությունների: Մակայն եթե բանավոր թարգմանության դեպքում հնարավոր է փոքր-ինչ շեղում լեզվի քերականական կանոններից, կարելի է պարզեցնել խոսքը կամ զգացմունքային կողմն ապահովել հնչերանգի, դադարների, դեմքի արտահայտության և ձեռքի շարժումների միջոցով (ոչ համաժամանակյա թարգմանության դեպքում), ապա գրավոր թարգմանության դեպքում լեզվական օրենքներն ու կանոնները պետք է հստակ և ճշգրիտ լինեն: Մյուս կողմից, գրավոր թարգմանության ժամանակ թարգմանիչն ունի մի շարք առավելություններ՝ բառարաններ, ավելի երկար ժամանակ, նկատված սխալներն ուղղելու, խմբագրելու, վերանայելու, դադար տալու, հանգստանալու, ապա աշխատանքը կրկին շարունակելու և, վերջիվերջո, պատշաճ կերպով ամբողջացնելու հնարավորություն: Գրավոր թարգմանչի աշխատանքի և՛ սկզբնաղբյուրը, և՛ արդյունքը գրված բառեր են:

Գրավոր թարգմանիչն ունի ընթերցող, իսկ բանավոր թարգմանիչը՝ լսարան: Բանավոր թարգմանիչը չի կարող վերանայել իր կատարած աշխատանքը կամ ուղղել թույլ տված սխալները և իր առաջ չի կարող ունենալ իր աշխատանքի արդյունքը, եթե, իհարկե, թարգմանությունը չի ձայնագրվել:

Ըստ Լինն Վիսսոնի գրավոր թարգմանության դեպքում գործում է *թարգմանիչ – տեքստ – ընթերցող* կապը, իսկ բանավոր թարգմանության դեպքում՝ *թարգմանիչ – բանավոր հաղորդագրություն – ունկնդիր* (Виссон2012:10):

Բանավոր թարգմանիչը պետք է կարողանա շատ արագ կերպով անցում կատարել մի լեզվից մյուսը: Հասկանալի է, որ երկլեզու մարդը չի կարող թարգմանիչ համարվել՝ միայն հիմնվելով այն հանգամանքի վրա, որ տիրապետում է երկու լեզվի, քանի որ թարգմանիչը լեզվին տիրապետելուց բացի պետք է ունենա մի շարք այլ՝ այսպես կոչված վերլեզվական հմտություններ: Պարզապես երկլե-

գու մարդն ավելի հեշտությամբ կարող է հմտանալ թարգմանության մեջ, քանի որ նրա գիտակցությունում առկա են արդեն երկու լեզուներ, և նրանից պահանջվում է միայն ճիշտ ձևով անցում կատարել մեկ լեզվից մյուսին:

Մակայն կանադացի բանավոր թարգմանիչ Բրայան Հարիսն այլ կարծիքի է: Ըստ նրա, երկլեզու մարդու համար թարգմանությունը բնական և ի ծնե հմտություն է, և նա նշում է, որ բնական թարգմանությունը երկլեզու մարդու առօրյայում կատարվող թարգմանությունն է առանց հատուկ նախապատրաստությունների (Harris, Sherwood 1978:155-170):

Այս տեսակետը կարելի է կասկածի տակ դնել, քանի որ, ինչպես գիտենք, թարգմանությունը մտավոր գործընթաց է, և եթե նույնիսկ երկլեզու մարդուն ինդրենք թարգմանել այս կամ այն բառը, ապա նա մի պահ դադար կտա՝ ոչ թե բառի թարգմանությունը հիշելու համար, այլ որպեսզի ուղեղը անցում կատարի մի լեզվից մյուսին:

Գրավոր և բանավոր թարգմանիչների աշխատանքների տարբերությունը հստակ կերպով ներկայացրել է Բրայան Հարիսը (Harris 1981).

Գրավոր թարգմանիչի աշխատանք	Բանավոր թարգմանիչի աշխատանք
1.Գրավոր թարգմանության տեքստը ստեղծվում է անցյալում, այսինքն՝ թարգմանությունից առաջ:	1.Ելույթը տեղի է ունենում տեղում՝ ներկայում:
2.Տեքստը և գործընթացն ավարտվում են միաժամանակ:	2.Աշխատանքն ավարտված չէ թարգմանության ստեղծման ընթացքում, և ավարտն անկանխատեսելի է:
3.Կարելի է տեքստը կարդալ, ժամանակավորապես մի կողմ դնել և ավելի ուշ վերադառնալ դրան:	3.Բանավոր հաղորդագրությունը արագ «անհետանում է», և թարգմանիչը հույսը կարող է դնել միայն հիշողության վրա:
4. Տեքստը կազմված է բացառապես բառային միավորներից, (այսինքն՝ բացակայում են ժեստեր, միմիկաներ), և թարգմանիչն հայտնի չէ, թե ինչ պայմաններում է այն գրվել:	4. Բանավոր խոսքն ուղեկցվում է ժեստերով, և թարգմանիչն ուղղակիորեն տեսնում է, թե ինչ պայմաններում է ստեղծվում խոսքը, ինչպես է ելույթ ունենում խոսողը:
5. Գրավոր թարգմանիչը հիմնականում աշխատում է նույն հեղինակի մեկ կամ մի քանի գործի հետ և ծանոթ է նրա ոճին:	5. Բանավոր թարգմանիչը ստիպված է աշխատել տարբեր ելույթ ունեցողների հետ, որոնք հնարավոր

	է շատ տարբեր ոճեր ունենան:
6. Քանի որ տեքստը գրված է անցյալում, այն որևէ ուղղակի զգայականներգործություն չի ունենում թարգմանչի վրա:	6. Բանավոր թարգմանիչը ոչ միայն տեղյակ է ելույթի պայմաններին կամ, հնարավոր է նույնիսկ, հանդիպման կամ ժողովի լարված մթնոլորտին, այլ ինքը ևս անմիջականորեն այդ լարված մթնոլորտի մաս է կազմում:
7. Մինչ թարգմանության հրապարակումը թարգմանիչը կարող է նորից վերանայել կամ խմբագրել աշխատանքը:	7. Բանավոր թարգմանիչը պետք է ճիշտ թարգմանի հենց իր առաջին և միակ փորձից:
8. Ինչպես և հեղինակը, թարգմանիչը նույնպես տեղյակ չէ, թե ով է իր ընթերցողը, և հեղինակի և ընթերցողի միջև որևէ կապ չկա:	8. Բանավոր թարգմանիչը գիտի՝ ով է իր լսարանը, և հիմնականում տեսնում է նրանց:

Անկասկած, և՛ բանավոր, և՛ գրավոր թարգմանիչը պետք է փայլուն կերպով տիրապետի իր աշխատանքային լեզվին: Սակայն այս երկու մասնագիտությունների հնարներն ու հմտություններն էապես տարբերվում են:

Պատահական չէ, որ այս կամ այն մասնագիտության ընտրությունը անմիջականորեն կապված է մարդու էության և բնույթի հետ: Այն մարդն, ում հաճելի է խմբագրել, աշխատել տեքստի վրա, կարող է դառնալ գրավոր թարգմանիչ, մինչդեռ բանավոր թարգմանիչը պետք է ունենա փութաջանություն և արագ կողմնորոշվելու ունակություն: Փորձառու գրավոր թարգմանիչը կարող է օրական թարգմանել 7-8 էջ, իսկ բանավոր թարգմանիչը նույն չափի տեքստը թարգմանում է 20-25 րոպեում: Հետևաբար, պարզ է, որ հազիվ թե բարձրակարգ գրավոր թարգմանիչը նույն հաջողությամբ կատարի բանավոր թարգմանություն և հակառակը:

Թարգմանիչը հանդիսանում է երկու լեզուների միջև միջնորդ: Ենթադրվում է, որ թարգմանիչը պետք է կարողանա շատ արագ կամ ակնթարթորեն համադրել երկու լեզվական համակարգեր և գտնի լեզվական ճիշտ համարժեքներ: Սրա համար թարգմանչից ակնկալվում է մեկ լեզվից մյուսին կամ աղբյուր լեզվից թիրախ լեզվին անցնելու ունակություն: Սա թարգմանչի կարևորագույն հմտություններից է, որը կոչվում է **«անցման հմտություն»** (Миньяр-Белоручев, 1959): Այս հմտությունը ենթադրում է անցում մայրենի լեզվից օտար լեզվի միջավայր, որում ներառված են բառապաշար, քերականություն, շարահյուսություն, հնչյունաբանություն և այլն, ինչպես նաև օտար լեզվից անցում դեպի մայրենի լեզու: Առանց այս հմտության թարգմանիչը անկարող կլինի ժամանակային առումով հասցնել թարգմանությունը կատարելը, քանի որ նա պետք է կարողանա պատշաճ ընկա-

լել օտար լեզվով տեքստը, հիշել, վերլուծել այն, այնուհետև կազմավորել ուղե-
ղում թարգմանությունը և մի շարք այլ գործընթացներ:

Այս հմտությունը շատ ավելի բարդ է համաժամանակյա թարգմանության
դեպքում, քանի որ թարգմանությունը կատարվում է լսելու գործընթացի հետ
միաժամանակ: Մի լեզվից մյուսին անցնելը համաժամանակյա թարգմանության
դեպքում պետք է կատարվի շատ արագ ու հստակ, սակայն դժվարությունը կա-
յանում է նրանում, որ այս բարդ գործընթացի հետ մեկտեղ տեղի է ունենում մեկ
այլ, ոչ պակաս բարդ գործընթաց. միաժամանակ և՛ լսել, և՛ խոսել: Մրա հետևան-
քով թարգմանիչը կարող է շատ արագ հոգնել և, հետևաբար, բազում սխալներ և
բացթողումներ թույլ տալ:

Թարգմանչի առաջ ծագող խնդիրներից է նաև այն, որ թարգմանչի սեփական
ձայնը կարող է խանգարել լսել խոսողի ձայնին, չնայած այն փաստին, որ ականջա-
կալները մեծապես օժանդակում են այս խնդրի լուծմանը: Այս խնդիրը հաղթահարե-
լու համար թարգմանչին անհրաժեշտ է մեկ այլ հմտություն, որ կոչվում է **«լսելու և
խոսելու սինխրոնիզացում (համաժամանակեցում)»** (Миньяр-Белоручев 1959):

Բանավոր թարգմանչի համար շատ ավելի կարևոր է ճշգրիտ փոխանցել աս-
վածի միտքը՝ առանց կմկմոցների կամ կրկնությունների: Թարգմանչի խոսքը
պետք է լինի հստակ, արտահայտիչ, ճիշտ առոգանությամբ և հնչերանգով, քանի
որ միայն նման խոսքը կարող է հաճելի և լսելի լինել, այլապես լսարանի ուշադ-
րությունը կարող է շեղվել և հնարավոր է այլևս չլսեն թարգմանչին: Մինյար-Բե-
լոռուչևը նշում է. «Թարգմանչի խոսքի սահունությունը անտեղի դադարներից
զուրկ և ոչ շատ արագ խոսքն է» (Миньяр-Белоручев 1959):

Ի տարբերություն գրավոր թարգմանչի, ով թարգմանությունը կատարելիս ավելի
լավ տարբերակ գտնելու, գործընկերների հետ խորհրդակցելու, բառարան-
ների, հանրագիտարանների, տեղեկատուների միջոցով լրացուցիչ տեղեկությու-
ններ ստանալու և ավելի վաղ կատարած թարգմանական սխալներն ուղղելու
հնարավորություն ունի, համաժամանակյա թարգմանիչը կարող է հույսը դնել
միայն գործնականում ձեռք բերած փորձի և հմտությունների վրա:

Համաժամանակյա և հետևողական թարգմանիչներ

Հաճախ համաժամանակյա և հետևողական թարգմանիչներին ընդհանրաց-
նում են մեկ եզրույթի ներքո՝ **զիտաժողովների թարգմանիչ** (որնդ որում՝ զիտա-
ժողով բառը ներառում է նաև միջազգային կոնֆերանսներ, կոնգրեսներ, միջազ-
գային ընկերությունների նիստեր, հանդիպումներ, զիտական սիմպոզիումներ,
բանակցություններ, միջազգային և միջպետական հանդիպումներ, հանրային ե-
լույթներ, ականավոր մասնագետների և գործիչների դասախոսություններ):

Մակայն հարկ է նշել համաժամանակյա և հետևողական թարգմանիչների
հիմնական տարբերությունները:

1. Աղբյուր տեքստի ընկալումը և թիրախ լեզվով թարգմանությունը կատար-
վում են տարբեր ժամանակներում, իսկ համաժամանակյա թարգմանությու-
նի դեպքում ժամանակային առումով այս երկու գործընթացները համընկ-
նում են:

2. Հետևողական թարգմանության ժամանակ լարվում և աշխատում է հիշողությունը, քանի որ բնագրի երկար հատվածներ հիշելը բավականին բարդ է: Համաժամանակյա թարգմանության ընթացքում թարգմանիչը գործի է դնում միաժամանակ լսելու, մտածելու և խոսելու իր հմտությունը:
3. Նշումները կարող են օգնել միայն հետևողական թարգմանչին, իսկ համաժամանակյա թարգմանիչը չի կարող կատարել նշումներ, քանի որ ժամանակը շատ սահմանափակ է:
4. Հետևողական թարգմանիչը գտնվում է մասնակիցների ուշադրության կենտրոնում, իսկ համաժամանակյա թարգմանիչը գտնվում է առանձին խցիկում և անջատված է մասնակիցներից:

Չնայած շատ բանավոր թարգմանիչներ կատարում են և՛ համաժամանակյա, և՛ հետևողական թարգմանություն, անգլերեն **«conference interpreter»** եզրույթը սովորաբար վերաբերում է համաժամանակյա թարգմանչին: **«Ուղեկցող-թարգմանչին»**, այսինքն՝ այն թարգմանչին, ով կատարում է ոչ պաշտոնական թարգմանություն սեղանի շուրջ, ռեստորանում, խանութում, անգլերեն կոչում են **«escort interpreter»**: Երբեմն գիտաժողովին թարգմանելուց բացի, թարգմանչին խնդրում են աշխատել նաև ոչ պաշտոնական իրադարձությունների ժամանակ, որտեղ թարգմանիչը ստիպված է աշխատել երկու լեզվով՝ թարգմանել և՛ աղբյուր լեզվից թիրախ լեզու, և՛ հակառակը: Մա կարող է ոչ միայն ֆիզիկապես դժվար լինել, այլև գիտելիքի առումով խնդիրներ առաջացնել, քանի որ ոչ պաշտոնական իրավիճակներում հիմնականում կիրառվում է խոսակցական լեզուն, և թարգմանիչը պետք է քաջատեղյակ լինի նաև թիրախ լեզվի առօրյա-խոսակցական բառապաշարին, այլ ոչ միայն մասնագիտական և կոնկրետ ոլորտին վերաբերող եզրույթներին: Լինում են նաև լարված և կոնֆլիկտային իրավիճակներ, երբ բացի մասնագիտական կարողություններից թարգմանչին հարկավոր են նաև որոշակի դիվանագիտական հմտություններ:

Եզրակացություն

Այս ամենից հետևում է, որ բանավոր և գրավոր թարգմանիչները տարբեր մասնագետներ են, ովքեր գործ ունեն լեզվի տարբեր ոլորտների հետ, կիրառում են տարբեր մեթոդներ և հնարներ՝ ստանալով տարբեր արդյունքներ: Ուստի պարզապես թարգմանիչ բառը ոչ թե սխալ, այլ բացարձակապես չի արտացոլում այս երկու մասնագիտությունների բնույթը: Էական տարբերություններ կան նաև համաժամանակյա և հետևողական թարգմանիչների աշխատանքային առանձնահատկությունների միջև:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Gile, D. (1995) *Basic Concepts and Models in Interpreter and Translator Training*. Amsterdam: Benjamins.
2. Harris, B.; Sherwood, B. (1978) *Translating as Aninnate Skill*. In *Language Interpretation and Communication*, ed. D. Gerver and W.H. Sinaiko, Oxford and New York: Plenum.

3. Harris, B. (1981) *Prolegomenon to a Study of the Differences Between Teaching Translation and Teaching Interpreting*, Delisle.
4. Виссон, Л. (2012) *Синхронный перевод с русского на английский*. М.: Р. Валент.
5. Виссон, Л. (2001) *Практикум по синхронному переводу с русского языка на английский*. М.: Р. Валент.
6. Левицкая, Т.Р.; Фитерман, А.М. (1963) *Теория и практика перевода с английского языка на русский*. М.: Издательство литературы на иностранных языках.
7. Миньяр-Белоручев, Р.К. (1959) *Методика обучения переводу на слух*. М.: Изд-во ИМО.
8. Миньяр-Белоручев, А.П. (2008) *Английский язык. /Учебник устного перевода*. М.: Экзамен
9. Мирам, Г.Э.; Дайнеко, В.В.; Тарануха, Л.А.; Грищенко, М.В.; Гон, А.М. (2006) *Основы перевода*. Киев: Издательство “Ника-Центр”.
10. Фомин, С.К. (2006) *Последовательный перевод. Книга преподавателя*. М.: Восток-Запад.

Differences between the Working Process in Written and Oral Translation

Written and oral translations are two rather different processes, which require different skills and knowledge. The problems that translators and interpreters encounter are numerous and the ways to overcome them are not always similar to one another. As a matter of fact, different skills and abilities are required from translators. The ability to translate is not given to an individual by birth, but is a skill that can be gained through work and training. The present article is an attempt to properly present the differences between written and oral translations and the working processes of translators and interpreters.

Различия между рабочими процессами в письменном и устном переводах

Письменный и устный перевод сильно отличаются друг от друга. Они требуют разных навыков, знаний и способностей. Проблемы, стоящие перед переводчиками, и способы их преодоления различны в зависимости от вида перевода. Умение переводить не дается человеку от рождения – это навык, который приобретается за счет подготовки и обучения. Данная статья – опыт представления должным образом различий между письменным и устным переводами и соответствующим им рабочим процессом.

Մեր հեղինակները

Ալինա Պետրոսյան – ԵՊԲՀ օտար լեզուների ամբիոնի դասախոս, բ.գ.թ.
Էլ. հասցե՝ alina.petrosyan@yahoo.com

Անահիտ Հակոբյան – ԵՊՀ արտասահմանյան գրականության ամբիոնի ասպիրանտ
Էլ. հասցե՝
anahit.hakobyan1988@yandex.ru

Անի Տեր-Պետրոսյան – ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի դասախոս
Էլ. հասցե՝ aniterpetrosyan@ysu.am

Աննա Կնյազյան – ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի դոցենտ, բ.գ.դ.
Էլ. հասցե՝ annaknyazyan@ysu.am

Աստղիկ Մխիթարյան – Վաղարշապատի Մ.Գորկու անվան հ.5 ավագ դպրոցի ուսուցչուհի
Էլ. հասցե՝ asto7@rambler.ru

Արեգա Համբարձումյան – ԵՊՀ արտասահմանյան գրականության ամբիոնի ասպիրանտ
Էլ. հասցե՝ orbisenglish@gmail.com

Արմենուհի Մարտիրոսյան – ԵՊՀ դիվանագիտական ծառայության և մասնագիտական հաղորդակցման ամբիոնի ասիստենտ
Էլ. հասցե՝ arm.martirosyan@ysu.am

Գայանե Մուրադյան – ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի դոցենտ, բ.գ.դ.
Էլ. հասցե՝ g.murad@ysu.am

Գոհար Հարությունյան – ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի դոցենտ, բ.գ.թ.
Էլ. հասցե՝ goharharutyunyan@ysu.am

Համլետ Առաքելյան – ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի ասպիրանտ
Էլ. հասցե՝ hamlet.araqelyan@gmail.com

Հասմիկ Ղաջոյան – ՀԱՊՀ օտար լեզուների ամբիոնի դասախոս
Էլ. հասցե՝ hasmikghajoyan@mail.ru

Հասմիկ Մկրտչյան – ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի դասախոս
Էլ. հասցե՝ hasmikmkrтчyan@ysu.am

Մարիամ Առաքելյան – ՀՊՄՀ օտար լեզուների դասավանդման մեթոդիկայի ամբիոնի հայցորդ
Էլ. հասցե՝ mariamarakelyan89@mail.ru

Մարիամ Գևորգյան – ԵՊԼՀ ընդհանուր լեզվաբանության ամբիոնի ասպիրանտ
Էլ. հասցե՝ miriamgevorgian@gmail.com

Մարիանա Սարգսյան – ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի դոցենտ, բ.գ.թ.
Էլ. հասցե՝ marianasargsyan@ysu.am

Մարիկա Տոնյան – ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի դոցենտ, բ.գ.թ.
Էլ. հասցե՝ marikatonyan@ysu.am

Մարինե Մկրտչյան – ԵՊՀ դիվանագիտական ծառայության և մասնագիտական հաղորդակցման ամբիոնի դասախոս
Էլ. հասցե՝ m.mkrтчyan@ysu.am

Նաիրա Մկրտչյան – ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի դոցենտ, բ.գ.թ.
Էլ. հասցե՝ nairamkryan@ysu.am

Նատալյա Գոնչար-Խանջյան – ԵՊՀ արտասահմանյան գրականության ամբիոնի դոցենտ, բ.գ.թ.
Էլ. հասցե՝ natalie.goncharkhanjyan@ysu.am

Նարե Հակոբյան – ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի ասպիրանտ
Էլ. հասցե՝ narekaytser@gmail.com

Նարե Մկրտչյան – Հայ-Ռուսական (Մլավոնական) համալսարանի արտասահմանյան գրականության ամբիոնի ասպիրանտ
Էլ. հասցե՝ mkrtchyan.nare@gmail.com

Նարե Չոբանյան – ԵՊՀ թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնի ասպիրանտ
Էլ. հասցե՝ nare.chobanyan@gmail.com

Նարե Ջաբաղյան – ԵՊՀ թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնի դասախոս
Էլ. հասցե՝ narejabaghyan@ysu.am

Ջեմմա Միլիտոնյան – ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի անգլերեն լեզվի և գականության ամբիոնի դասախոս
Էլ. հասցե՝ jemmamilitonyan@yandex.com

Ռուզաննա Առաքելյան – ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի դոցենտ, Բ.գ.թ.
Էլ. հասցե՝ ruzanna.arakelyan@ysu.am

Միրարփի Կարապետյան – ԵՊՀ թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնի դասախոս, Բ.գ.թ.
Էլ. հասցե՝ sirarpikarapetyan@ysu.am

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ

«Լեզուն և գրականությունը գիտական իմացության ժամանակակից հարացույցում» գիտական հանդեսը լույս է տեսնում տարին մեկ անգամ: Հանդեսում տպագրվելու համար կարող են ներկայացվել հոդվածներ հայերեն, անգլերեն և ռուսերեն լեզուներով **Sylfaen** տառատեսակով, լուսանցքները՝ 2 սմ, վերնագիրը՝ 14 տառաչափով (աջ կողմում, գլխատառերով, թավատառ), հիմնական տեքստը և ենթավերնագրերը (ձախ կողմում, թավատառ), հեղինակի անուն, ազգանունը (աջ կողմում, թավատառ), աշխատավայրը (աջ կողմում, շեղատառ)՝ 12 տառաչափով, բոլոր տողերի միջև տարածությունը՝ 1.5: Հոդվածին անհրաժեշտ է կցել հայերեն, անգլերեն և ռուսերեն ամփոփագրեր՝ 60-80 բառի սահմաններում, 7-10 բանալի բառեր (հիմնական տեքստի լեզվով), հեղինակի մասին համառոտ տեղեկություն՝ աշխատավայր, կոչում, պաշտոն, էլ. հասցե, հեռախոսահամար (հայերեն):

- Տեքստը բաժանել հետևյալ մասերի՝ ներածություն, ենթաբաժիններ և եզրակացություն:
- Այլ հեղինակների մեջբերումները՝ չակերտների մեջ, որպես տեքստի շարունակություն /եթե կարճ է/ կամ նոր տողից /եթե երկար է/:
- Այլ հեղինակների աշխատությունների վերնագրերը՝ չակերտների մեջ:
- Փաստացի օրինակները՝ շեղատառ, առանց չակերտների: Եթե օրինակները ներկայանում են մեկից ավելի նախադասություններով, առանձնացնել տեքստից՝ վերևում և ներքևում թողնելով մեկական տարածություն: Օրինակի մեջ ուշադրության արժանի բառերը կամ բառախմբերը ներկայացնել թավատառ:
- Տեքստում աղբյուրը ներկայացնել հետևյալ ձևով՝ փակագծերում տալ հեղինակի ազգանունը և հրատարակչության տարեթիվը: Եթե մատնանշվում է էջը՝ տարեթվից հետո դնել հայկական վերջակետ, նշել էջը: Օրինակ՝ (Svartvik 2005) կամ (Bronfen 1992:330):
- Ծանոթագրությունները՝ հոդվածի վերջում, գրականության ցանկից առաջ:
- Գրականության ցանկը ներկայացնել **այբբենական կարգով**՝ խստիվ հետևելով ներքոնշյալ կանոններին՝
հեղինակի ազգանունը, անվանատառերը, (հրատարակման թվականը), աշխատանքի վերնագիրը (շեղատառերով, առանց չակերտների), հրատարակման վայրը, հրատարակչությունը, հայկական վերջակետ:

Օրինակներ՝

- 1.Ջահուկյան, Գ.Բ. (2003) *Շարահյուսական ուսումնասիրություններ*. Երևան: Ստոդիկ հրատարակչություն:
- 2.Eisenstein, E.L. (1979) *The Printing Press as an Agent of Change*. Cambridge: CUP.
- 3.Myer, T. (1997) *The Language of Science*. Available at: <<http://www.sfsite.com>> [Accessed June 2012]
- 4.Redbury, M. (2003) *Language and Discourse*. // Investigations in Linguistics. / Ed. by R.K. Smith. New York: Redgate Inc.
- 5.Svartvik, J. (2005) *A Life in Linguistics*. // The European English Messenger. / Ed. by J.A. Stotesbury. Vol.14 (1). Portugal: Grafica de Coimbra.
- 6.(1998) *Oxford Advanced Learner's Dictionary of Current English*. Oxford: OUP.

- Հոդվածի էլեկտրոնային տարբերակը ուղարկել afajournal@ysu.am էլ. հասցեին:

Հասցե՝ ՀՀ, Երևան-0025, Ալեք Մանուկյան 1,
Երևանի պետական համալսարան
Հեռախոս՝ (+374 60) 710 546
Էլ. հասցե՝ sedagasparyan@ysu.am, afajournal@ysu.am

«ԳԵՎՈՐԳ - ՅՐԱՅՐ» ՍՊԸ



Հրատարակչություն
Երևան, Գրիգոր Լուսավորչի 6:
Հեռ.՝ (011) - 52.79.74, 055-52.79.74
Էլ. փոստ lusakn@rambler.ru